Ի՞նչ է Տիրոջ Ընթրիքը

Պարզ ասած, Տիրոջ ընթրիքը Հիսուսի հացկերույթն է Իր աշակերտների հետ Իր խաչելությանը նախորդող գիշերը: Հիսուսը պատվիրեց նրանց, որ շարունակեն կատարել այս ընթրիքը: Տարիներ անց Պողոս առաքյալը գրեց Կորնթոսի քրիստոնյաներին՝ բացատրելով այս սովորույթը.

Որովհետև ես Տիրոջից ընդունեցի այն, որ ձեզ էլ ավանդեցի, որ Տեր Հիսուսն այն գիշերը, որ մատնվում էր, հաց առավ, և գոհանալուց հետո կտրեց և ասաց. Առեք, կերեք. այս է Իմ մարմինը, որ ձեզ համար կոտրվում է. այս արեք Իմ հիշատակի համար: Այնպես էլ, ընթրիքն ուտելուց հետո, բաժակն առավ և ասաց. Այս բաժակը նոր ուխտն է Իմ արյունով. այս արէք, քանի անգամ որ խմեք, Իմ հիշատակի համար: Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեք, մինչև որ Նա գա (Ա Կորնթացիների 11:23-26):

Տիրոջ ընթրիքը հասարակ հացկերույթ չէ: Այն շփման, խորհրդածության, վերհիշելու և հոգևոր իրողությունների ժամանակ է: Տիրոջ ընթրիքը սովորեցնում է քրիստոնյաներին, թե ով է Հիսուսը և ինչ Նա արեց Իր երկրային ծառայության ընթացքում: Գիտակցելով Տիրոջ ընթրիքի նշանակությունը և կարևորությունը եկեղեցու կյանքում՝ մենք ավելի լավ կհասկանանք Հիսուսի կյանքը և ծառայությունը:

Ինչո՞ւ են քրիստոնյաները կատարում Տիրոջ ընթրիքը

Մենք մասնակցում ենք Տիրոջ ընթրիքին, քանի որ.

•Հիսուսը պատվիրեց դա Իր հետևորդներին: (1 Կոր. 11:24–26, Մատթ. 26:26-30, Մարկոս 14:22-25, Ղուկաս 22:19-20).

•Ինչպես որ նյութական կերակուրն է սնուցում և զորացնում մարմինը, Տիրոջ ընթրիքը սնուցում և զորացնում է Քրիստոսի մարմինը՝ թե՛ անհատապես, և թե՛ որպես համայնք:

•Այս կերպով մենք հռչակում ենք մեր հույսը, որ Քրիստոսը վերադառնալու է, և որ մենք ներված ենք Նրա արյամբ (Ա Կորնթացիների 11:26): Ամեն անգամ, կատարելով Տիրոջ ընթրիքը, մենք հռչակում ենք Ավետարանը և Հիսուսի վերադարձը:

•Այն ամուր հոգևոր կապ է ստեղծում հավատացյալների մեջ (Ա Կոր.10:17):

•Տիրոջ ընթրիքը երկրպագության ձև է (շատ քրիստոնյաների համար՝ հատուկ երկրպագության ձև):

•Այն անհրաժեշտ ժամանակ է մտորման և ինքնադիտողության համար (Ա Կոր. 11:28):

•Այն սովորեցնում է նորահավատներին, թե ով է Հիսուսը և ինչ Նա արեց մեզ համար, (Ա Կորնթացիների 11:24-26), և թարմություն է բերում փորձառու հավատացյալներին:

•Այն խթանում է միաբանությունը Քրիստոսի հետ և հավատացյալների միջև: Միաբանությունը Տիրոջ ընթրիքի կենտրոնական ուղերձներից մեկն է: Այս միաբանության խորհրդանիշը մեկ հացի շոթն է, որը բոլորս կիսում ենք:

Ի՞նչ է այն նշանակում

Տիրոջ ընթրիքը շատ կարևոր է՝ հասկանալու համար, որ մենք Քրիստոսի եկեղեցին ենք: Այն խոր իմաստ ունի հետևյալ չորս բնագավառներում.

•**Երկրպագություն:** Դրանով մենք երկրպագում ենք Քրիստոսին՝ Նրա գործի, շնորհքի, սիրո և փրկության համար: Մենք մասնակցում ենք Տիրոջ ընթրիքին՝ գոհանալով, որ Քրիստոսը զոհեց Իրեն մեզ համար:

•**Վկայություն:** Տիրոջ ընթրիքին մասնակցելը վկայություն է, որ Հիսուսը մահացավ մեր մեղքերի համար և հաղթականորեն հարություն առավ՝ մեզ հավիտենական կյանք պարգևելու համար, և որ Հիսուսը կվերադառնա որպես հաղթանակ տարած Թագավոր (Մատթ. 26:29, Ա Կորնթացիների 11:26):

•**Շինություն:** Տիրոջ ընթրիքի ժամանակ Սուրբ Հոգին ծառայում է ամեն մեկիս՝ թե՛ անհատապես, թե՛ որպես Քրիստոսի մարմին (Ա Կորնթացիների 10:16): Սա փոխադարձ խրատի, խաթարված փոխհարաբերությունների վերականգնման, անցյալի տրտմությունները ներելու և վիրավորանքներ հասցնելուց ապաշխարելու ժամանակ է (Ա Կորնթացիների 11:28-29):

•**Ծառայություն.** Տիրոջ ընթրիքն առիթ է, որ քրիստոնյաները ծառայեն միմյանց, թե՛ այն կատարելու ժամանակ, թե՛ դրանից հետո: Հիշելով Քրիստոսի զոհաբերող պարգևը խաչի վրա (հացի և գինու պարգևները)՝ մենք հզոր շարժառիթ ենք ստանում, որ ներկայացնենք մեր մարմինը «կենդանի, սուրբ և Աստծուն ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմեացիների 12:1): Մենք առատ պարգևներ ենք ստանում Տիրոջից, և նույն կերպով էլ պետք է տարածենք այս առատությունը մեր շուրջը գտնվող մարդկանց՝ սկսելով նրանցից, ովքեր ամենից մոտ են մեզ (Ա Տիմոթեոս 5:8):

His House

Ministries

www.Hishouseofworship.org

Տիրոջ Ընթրիքը
(Սուրբ Հաղորդության Խորհուրդը)

Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեք, մինչև որ Նա գա (1 Կոր. 11:26).

- Ի՞նչ է Տիրոջ Ընթրիքը
- Ինչո՞ւ են քրիստոնյաները կատարում Տիրոջ ընթրիքը
- Ի՞նչ է այն նշանակում
- Գործնական հարցեր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ինչո՞ւ է սա կարևոր

•Այն պարզ փաստը, որ Հիսուսը պատվիրեց մեզ կատարել Տիրոջ ընթրիքը, կարևոր է դարձնում այն:

•Տիրոջ ընթրիքին մասնակցելու շնորհիվ մեր փոխհարաբերությունները Հիսուսի և այլ հավատացյալների հետ ավելի խորն են դառնում: Որքան ավելի պարզ ու խորն ենք հասկանում Հիսուսի խաչը և Նրա փոխարինող մահը խաչի վրա, այնքան ավելի ենք ճանաչում Հիսուսի սիրտը, այնքան ավելի ենք ցանկանում հետևել և հնազանդվել Նրան: Այս Ընթրիքն իրար հետ կիսելը նույնպես խթանում է միաբանությունը և սերը հավատացյալների միջև:

•Մասնակցությունը նույնպես պահանջում է անձնական մտորումներ և մեղքերի խոստովանություն: Տիրոջ ընթրիքն անփոխարինելի ժամանակ է ինքնավերլուծության, խոստովանության և ապաշխարության համար:

•Տիրոջ ընթրիքն առանցքային պահ է քրիստոնեական փոխհարաբերությունների մեջ: Մենք հռչակում ենք, որ մեկ ենք Քրիստոսում, և որպես մարմին վկայում ենք, որ մեր Տերը և Փրկիչը հարություն է առել, և մեկ օր Նա վերադառնալու է:

ՈՐՔԱ՞Ն ՀԱՃԱԽ ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵՆՔ ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԸ

- Աստվածաշունչը չի նշում սա:
- Կարելի է ասել, որ առաջին Եկեղեցին կատարում էր Տիրոջ ընթրիքն ամեն անգամ, երբ հավատացյալները հավաքվում էին միասին հացկերույթի կամ հաց կիսելու համար: Մենք չենք կարող ասել՝ դա տեղի էր ունենում ամեն օր, ամեն շաբա՞թ, թե՞ այլ հաճախակիությամբ:
- Տիրոջ ընթրիքն ընդունելու հաճախակիությունը կախված է այն բանից, թե որքանո՛վ ենք մենք հասկանում Տիրոջ ընթրիքը: Գլխավորն այն է, որ բոլոր հավատացյալները պետք է մասնակցեն Տիրոջ ընթրիքին, հասկանան դրա կարևորությունը և աճեն իրենց փոխհարաբերությունների մեջ Քրիստոսի և այլ հավատացյալների հետ:

ԱՐԴՅՈՔ ԿԱ՞Մ ՄԵԿ ՃԻՇՏ ՁԵ՝ ՍԱՅՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Ոչ: Բայց կան որոշ տարրեր, որոնք ընդգրկված են Տիրոջ ընթրիքը պատշաճ կերպով կատարելու մեջ: Ստորև բերված են մի քանի աստվածաշնչյան ցուցումներ ողջամիտ երկրպագության համար:

ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԻՑ ՍՈՍՑ

•Պողոս առաքյալը խրախուսում է մեզ քննել մեր անձերը մինչև Տիրոջ ընթրիքին մասնակցելը (Ա Կորնթացիների 11:28): Նա խրախուսում է մեզ բացահայտել ամեն մեղք, չներում, դառնություն, բարկություն, ատելություն և ցանկացած նման զգացմունք կամ վերաբերմունք, և բերել դրանք Աստծո առջև: Ապաշխարությունն անհրաժեշտ է մինչև Տիրոջ ընթրիքին մասնակցելը: Պողոս առաքյալը զգուշացումներ է անում, որոնց պետք է ուշադրություն դարձնեն բոլոր քրիստոնյաները Տիրոջ ընթրիքին մասնակցելուց առաջ:

> **Ուրեմն, ով որ այս հացն ուտի կամ Տիրոջ բաժակը խմի անարժանությամբ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին և արյանը: Ուրեմն թող մարդ փորձի իր անձը, և ապա այն հացից ուտի և այն բաժակից խմի: Որովհետև անարժանությամբ ուտողը եւ խմողը իր անձի համար դատաստան է ուտում և խմում, որ չի որոշում Տիրոջ մարմինը: Նրա համար էլ ձեր մեջ շատ հիվանդներ և ցավագարներ կան, և շատեր էլ ննջած են (Ա Կորնթացիների 11:27-30):**

• Հենց որ մենք խոստովանում ենք մեր մեղքերը և խնդրում ենք Աստծո ներումը, մենք պետք է հավատքով մոտենանք Տիրոջ սեղանին՝ հավատալով, որ շնորհիվ Հիսուսի զոհի, Աստված առաջարկում է մեզ Իր ներումը: Մենք պետք է ավարտենք մեր աղոթքը՝ համոզված լինելով Աստծո ներման մեջ: Տիրոջ սեղանի հացն ուտելը և գինին խմելը մեր վկայությունն է այն մասին, որ մենք ներված ենք:

- Թեև Տիրոջ ընթրիքը հանդիսավոր պահ է, այն նույնպես գոհության, ցնծության և մեծ ուրախության ժամանակ է: Մենք հիշում ենք և տոնում ենք Քրիստոսի հրաշալի փրկարար աշխատանքը: Մենք նույնպես տոնում ենք Քրիստոսի հետ ունեցած միաբանությունը մեկս մյուսի հետ և Սուրբ Հոգու միջոցով:

ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

•Սուրբ գրքում չկան հատուկ ցուցումներ այն մասին, թե ինչպես մենք պետք է կատարենք Տիրոջ ընթրիքը: Միակ տեղեկությունը, որը մենք ունենք, Հիսուսի և Պողոսի խոսքերն են, որոնք Տիրոջ ընթրիքն անցկացնող ծառայողը հաճախ կարդում է անմիջապես Աստվածաշնչից:

- Տարբեր եկեղեցիներ տարբեր կերպով են կատարում Տիրոջ ընթրիքը: Ըստ ավանդության, շատ եկեղեցիներ օգտագործում են խաղողի հյութի առանձին բաժակներ և հացի փոքրիկ կտորներ, որոնք բաժանվում են մասնակիցներին: Հենց որ բաժանվում է ողջ հացը և գինին, մասնակիցները միասին ուտում են հացը և խմում են հյութը՝ դրանով շեշտադրվելով եկեղեցու միությունը: Այլ եկեղեցիներ գերադասում են օգտագործել հյութի մեծ գավաթ և հացի ամբողջ շոթ:

ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԻՑ ՀԵՏՈ

- Տիրոջ ընթրիքը կատարելը հիշեցնում է մեզ, թե ովքե՞ր ենք մենք Քրիստոսում (Եկեղեցին Քրիստոսի մարմինն է): Մենք պետք է ապրենք այս համոզվածությամբ, որպեսզի մեր կյանքերով ցույց տանք դրա իրական լինելը: Մենք պետք է ձգտենք արտացոլել Քրիստոսին մեր առօրյայում, ձգտենք հաշտության այնտեղ, որտեղ փոխհարաբերությունները խաթարված են, և խաղաղություն բերենք այնտեղ, որտեղ խռովություն կա:
- Տիրոջ ընթրիքը հիշեցնում է մեզ, որ Հիսուսը վերադառնալու է որպես հաղթանակ տարած Թագավոր: Մեր կյանքերը ձևավորվում են այս գիտակցումով. չնայած նեղություններին և դժվարություններին՝ մենք կարող ենք ապրել այն հույսով, որ մեր Տերը և Փրկիչը վերադառնում է: Այս պատճառով, բոլոր հավատացյալները կարող են համարձակ հռչակել՝ Մարանաթա՛: «Ե՛կ, Տեր Հիսուս» (Հայտնություն 22:20):

His House®
MINISTRIES